

# «Միասին՝ դեպի ավելի լավ Համացանց»



Դասի նպատակը՝

Գիտելիքների տրամադրում համացանցի ապահով և արդյունավետ օգտագործման, դրական կողմերի ու հնարավորությունների մասին:

Դասի խնդիրները՝

- ✓ Համացանցից անվտանգ օգտվելու կանոնների կիրառում, վտանգների ներկայացում:
- ✓ Էթիկայի կանոնները պահպանում համացանցից օգտվելիս :
- ✓ Սեփական մտքեր ու կարծիք արտահայտելու կարողության ձևավորում և զարգացում:

Անհրաժեշտ իրեր՝

թել, նամակներ, կպչուն գունավոր թղթեր, շարժական գրատախտակ, սև արկղ, ծառ, քար, 0 և 1 թվային կոդավորված պաստառ



Դասի պլան

1.Նախապատրաստական մաս՝ դասի նպատակների ներկայացում (5 րոպե)

2. Թելերով պարի ներկայացում (5 րոպե)

3. Թեմաների ներկայացում (15 րոպե )

4.Քննարկումներ( 13րոպե)

5.Ստացած նյութի ամփոփում (7 րոպե)

*Դասը կայանում է դպրոցի բակում:*



Բարև ձեզ, երեխանե՛ր: Մենք այսօր կխոսենք աշխարհը գրավող և հետաքրքիր ինտերնետի մասին: 0 և 1 կոդավորման միջոցով գուշակում ենք դասի կարգախոսը:

Կոդավորված թվերն են՝Մ-11011000 ի-11000111 ա-10110011 ս-11101011 ի-11000111 ն-11011101, դ-10111001 ե-10111011 պ-11100101 ի-11000111, ա-10110011 վ-11101101 ե-10111011 լ-11001001 ի-11000111, լ-11001001 ա-10110011 վ-11101101, հ-11010001 ա-10110011 մ-11011001 ա-10110011 ց-11110011 ա-10110011 ն-11011101 ց-11110011:

Կարգախոսն է՝ «Միասին դեպի ավելի լավ համագործակցություն»:





| Պայմանանշան / Երկուական կոդ | Պայմանանշան / Երկուական կոդ | Պայմանանշան / Երկուական կոդ | Պայմանանշան / Երկուական կոդ | Պայմանանշան / Երկուական կոդ |
|---|---|---|---|---|
| Բացատ / 00100000 | 7 / 00110111 | Զ / 10111100 | Ձ / 11010010 | Ռ / 11101000 |
| ! / 00100001 | 8 / 00111000 | զ / 10111101 | ձ / 11010011 | ռ / 11101001 |
| " / 00100010 | 9 / 00111001 | Է / 10111110 | Ղ / 11010100 | Ս / 11101010 |
| # / 00100011 | : / 00111010 | է / 101111111 | ղ / 11010101 | ս / 11101011 |
| $ / 00100100 | ; / 00111011 | Ը / 11000000 | Ճ / 11010110 | Վ / 11101100 |
| % / 00100101 | < / 00111100 | ը / 11000001 | ճ / 11010111 | վ / 11101101 |
| & / 00100110 | = / 00111101 | Թ / 11000010 | Մ / 11011000 | Տ / 11101110 |
| ' / 00100111 | > / 00111110 | թ / 11000011 | մ / 11011001 | տ / 11101111 |
| ( / 00101000 | ? / 00111111 | Ժ / 11000100 | Յ / 11011010 | Ր / 11110000 |
| ) / 00101001 | @ / 01000000 | ժ / 11000101 | յ / 11011011 | ր / 11110001 |
| * / 00101010 | \ / 01011100 | Ի / 11000110 | Ն / 11011100 | Ց / 11110010 |
| + / 00101011 | _ / 01011111 | ի / 11000111 | ն / 11011101 | ց / 11110011 |
| , / 00101100 | Ա / 10110010 | Լ / 11001000 | Շ / 11011110 | Ւ / 11110100 |
| . / 00101101 | ա / 10110011 | լ / 11001001 | շ / 11011111 | ւ / 11110101 |
| / / 00101110 | Բ / 10110100 | Խ / 11001010 | Ո / 11100000 | Փ / 11110110 |
| 0 / 00110000 | բ / 10110101 | խ / 11001011 | ո / 11100001 | փ / 11110111 |
| 1 / 00110001 | Գ / 10110110 | Ծ / 11001100 | Չ / 11100010 | Ք / 11111000 |
| 2 / 00110010 | գ / 10110111 | ծ / 11001101 | չ / 11100011 | ք / 11111001 |
| 3 / 00110011 | Դ / 10111000 | Կ / 11001110 | Պ / 11100100 | Օ / 11111010 |
| 4 / 00110100 | դ / 10111001 | կ / 11001111 | պ / 11100101 | օ / 11111011 |
| 5 / 00110101 | Ե / 10111010 | Հ / 11010000 | Ջ / 11100110 | Ֆ / 11111100 |
| 6 / 00110110 | ե / 10111011 | հ / 11010001 | ջ / 11100111 | ֆ / 11111101 |





## Ինտերնետի մասին գիտելիքների հիշեցում

Աշակերտները  պարում են թելերով պար` ստեղծելով համաշխարհային սարդոստայն: Պարի ընթացքում թելերը փոխանցելով` կարծես թե ինֆորմացիա են հաղորդում:











Այնուհետև «Mentimetr»-ի նմանությամբ աշակերտներին հանձնարարվում է մեկ բառով գրել, թե ինչ է համացանցը: Գրատախտակին աշխատում են գունավոր գրիչներով:











Բացահայտենք ինտերնետի օգտակար, ինչպես նաև վնասակար կողմերը:

Աշակերտները պատմում են իրենց հետ տեղի ունեցած դեպքեր հետևյալ թեմաներից.

1.Սոցիալական ցանցեր

2.Բջջային տեխնոլոգիաներ

3.Ապահով համացանց(անվտանգություն,հետապնդումներ, մասնավոր կյանքի գաղտնիություն)

Պատմությունները լսելուց հետո աշակերտները հնարավոր լուծումները կստատնան, երբ գտնեն թաքնված նամակները: Նամակները թաքնված են ծառի վրա,սև արկղի մեջ, քարի տակ, գրատախտակին:

Նամակները գտնելու համար պետք է հաղթահարեն հետևյալ փորձությունները .

աշակերտներին հանձնարարվում է գտնել գաղտնագրված բառերը, ինչի համար նրանց տրվում աղյուսակ՝ պատրաստված lerningApps-ով):



- Կոդավորված բառերն են՝
- ծառ (ծ-11001101,ա-10110011, ռ-11101001),
- արկղ(ա-10110011, ր-11110001, կ-11001111, ղ-11010101),
- քար(ք-11111001, ա-10110011, ր-11110001),
- գրատախտակ (գ-10110111, ր-11110001, ա-10110011, տ-11101111, ա-10110011, խ-11001011, տ-11101111, ա-10110011, կ-1100111):









# Պատմում են պատմություններ





**№1**

-Մի անգամ ես գնացել էի հեռավոր բարեկամներիս այցելության և շատ տխուր էի, քանի որ չէի կարողանում շփվել ընկերներիս հետ:

Հնարավոր լուծումը գտան սև արկղի մեջ:



Այն է՝

Համացանցին
հեռավորությունը
չի վախեցնում:
Այն վայրկյանի ընթացքում
հաղորդագրություն կուղարկի
ընկերոջդ թեկուզ լուսնից:
-Միացրո՛ւ ինտերնետդ և
-կմոռանաս հեռավորության մասին:
-Էլեկտրոնային նամակն
անմիջապես կհասնի,
իսկ տեսազանգը կկրճատի
տարածությունը:









№2
-Քույրիկիս ծննդյան
տարեդարձի կապակցությամբ
մտածում էի՝ ինչ նվիրել նրան:
Որոնողական կայքերից մեկում գրեցի
հետևյալ արտահայտությունը՝ ծննդյան տորթեր:
Հայտնվեցին հետաքրքիր կայքեր,
որոնք առաջարկում էին տորթեր, որոնց
գումարը կարելի էր
վճարել հաղորդագրության միջոցով:
Ես անմիջապես ուղարկեցի
հաղորդագրությունն
իմ բջջային հեռախոսից և անչափ ուրախ
էի իմ հնարամտությունից:
Բայց այդպես էլ ոչ մի ծննդյան տորթ տեղ
չհասավ քույրիկիս:

Հնարավոր լուծումը թաքնված գտան ծառի վրա, նամակի տեսքով:
Այն է`



Ամեն անգամ գետը գերան չի բերի:

Մի՛ վստահեք այն ամենին, ինչ առաջարկում են ձեզ կայքերում:

Դրանք կարող են կեղծ լինել:



№3

Ես գրանցված եմ սոցցանցերում և ահա
ինչպիսի նամակ ստացա. «Բարև՛, Անժելա՛:
Ես ցանկանում եմ ծանոթանալ քեզ հետ:
Ուղարկի՛ր ինձ քո տան հասցեն և
հեռախոսահամարը :
Ես շատ եմ ուզում տեսնել քեզ, ինչի համար
լավ կլինի ուղարկես նաև քո նկարը»:





Հնարավոր լուծումը գտան քարի տակ, նամակի տեսքով:



Ամեն բարև տվող բարեկամ չէ:
**Արգելափակե՛ք անհանգստացնող մարդկանց:**

Տնային աշխատանք կատարելու համար
ինձ անհարաժեշտ էր գտնել տեղեկություն
Պասկալի մասին և սովորել այն:
Ես սկսեցի փնտրել այն
ինտերնետում, անցա մի կայքից մյուսը,
և համակարգչիս հետ
հանկարծ սկսեց ինչ-որ բան կատարվել:
Համակարգիչը դադարեց ենթարկվել ինձ:







Հնարավոր պատասխանը
գտան գրատախտակին
փակցված,
նամակի տեքստով:

Այն է՝

Անտեր ոչխարին գայլը կուտի:
Առանց հակավիրուս մի՛
ճանապարհորդիր ինտերնետում,
չէ՞որ չգիտես,
թե որտեղ կհանդիպի վտանգը:

Յուրաքանչյուր աշակերտ պետք է ասացվածքը համապատասխանեցնի համացանցում օգտվելու կանոնների հետ:

Ասացվածքները գրված են վարդագույն թղթի, իսկ խորհուրդները՝ կապույտ, և կախված են ծառի վրա:



**1. Աշխարհը շինողն ու քանդողը լեզուն է:**

**Հնարավորինս փա՛կ պահեք ձեր անձնական տվյալները:**

**2. Ժամանակը ոսկի է:**

**Ժամանակդ անիմաստ մի՛ վատնիր ինտերնետում:**









3.Բաց ամանը շունն էլ կլիզի, կատուն էլ:

Հնարավորինս փա՛կ պահեք ձեր անձնական տվյալները:

4.Աչքը շինելու փոխարեն, հոնքն էլ հանեցին:

Մի՛ վստահեք այն ամենին, ինչ առաջարկում են ձեզ կայքերում, դրանք կարող են կեղծ լինել:





# «Միասին՝ դեպի ավելի լավ Համացանց»



